ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2023 թվականի N 1085 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N 645-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անավարտ (կիսակառույց) շինությունների բնութագրման կարգը սահմանելու մասին» N 645-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) վերնագրում, 1-ին կետում, հավելվածի վերնագրում և հավելվածի 1-ին կետում «անավարտ (կիսակառույց)» բառերը փոխարինել «անավարտ կիսակառույց» բառերով:

2. Որոշման հավելվածով սահմանված կարգի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքով՝ շինությունները (բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, անհատական բնակելի տներ, այգետնակներ (ամառանոցներ) և դրանց կից

շինություններ, բազմաբնակարան բնակելի շենքեր, բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքներ, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական ու արտադրական նշանակության շինություններ, առանձին կանգնած հասարակական, արտադրական նշանակության և դրանց կից շինություններ, ավտոտնակներ (ավտոկայանատեղիներ, ավտոհանգրվաններ) ըստ ավարտվածության դասվում են՝

1) 0-50 տոկոս (ներառյալ) ավարտվածության աստիճան ունեցող շինություններ՝ շինությունները համարվում են 0-50 տոկոս (ներառյալ) ավարտվածության աստիճան ունեցող, եթե կառուցված են շինության պատերը և միջհարկային ծածկը.

2) 51-80 տոկոս (ներառյալ) ավարտվածության աստիճան ունեցող շինություններ՝ շինությունները համարվում են 51-80 տոկոս (ներառյալ) ավարտվածության աստիճան ունեցող, եթե կառուցված են շինության հիմնահարկը (հիմնահարկերը) և տանիքը.

3) 81 տոկոս և ավելի ավարտվածության աստիճան ունեցող շինություններ՝ շինությունները համարվում են 81 տոկոս և ավելի ավարտվածության աստիճան ունեցող, եթե լիովին ավարտված չեն հարդարման ու հարակից աշխատանքները:»:

3. Որոշման հավելվածով սահմանված կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով.

«3. Անավարտ կիսակառույց շինություններ են համարվում նաև քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա դեռևս չկառուցված կամ սույն կարգի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում չընդգրկված շինությունները:»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ